ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ՝ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները,

ղեկավարվելով 1991 թվականի դեկտեմբերի 30-ի՝ Օդային տարածության հետազոտման եւ օգտագործման համար համատեղ գործունեության մասին, 1991 թվականի դեկտեմբերի 30-ի՝ Ռազմավարական ուժերի մասին եւ 1992 թվականի փետրվարի 14-ի՝ Ռազմավարական ուժերի կարգավիճակի մասին Համաձայնագրերի դրույթներով,

ընդունելով ժողովրդական տնտեսության, գիտության, միջազգային համագործակցության շահերից ելնելով՝ օդային տարածության արդյունավետ հետազոտման եւ օգտագործման համար միասնական տիեզերական ենթակառուցվածքի պահպանման եւ զարգացման անհրաժեշտությունը,

հաշվի առնելով, որ տիեզերական ենթակառուցվածքը ստեղծվել է Համագործակցության մասնակից պետությունների միացյալ ջանքերով եւ ելնելով Համագործակցության մասնակից պետությունների ընդունած օրենսդրական ակտերից, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Ադրբեջանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ուզբեկստանի Հանրապետության եւ Ուկրաինայի տարածքներում տեղակայված տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտները ("Բայկոնուր" եւ "Պլեսեցկ" տիեզերակայանները, տեխնիկական, թռիչքային, վայրէջքային համալիրները, հրթիռակրի անջատվող մասերի ընկնելու շրջանները, տիեզերական օբյեկտների թռիչքի կառավարման կենտրոնները, տիեզերագնացների պատրաստման կենտրոնը, հրամանային եւ չափող համալիրները, տեղեկատվության ընդունման եւ մշակման կետերը, զինապահեստները եւ այլ օբյեկտներ) հանդիսանում են այդ պետությունների սեփականությունը:

Այդ օբյեկտների անշարժ գույքի օգտագործման, շարժական գույքի օգտագործման եւ տիրապետման իրավունքը, հատուկ համաձայնագրերի հիման վրա, փոխանցվում է Անկախ Պետությունների Համագործակցության ռազմավարական ուժերին (Տիեզերական միջոցների պետի կառավարմանը) կամ այլ շահագրգիռ կողմերի:

Տիեզերական տարածության հետազոտման եւ օգտագործման միջպետական ու ինքնուրույն ծրագրերի իրականացման համար տիեզերական ենթակառուցվածքի համակարգումը իրականացնում է Տիեզերքի գծով միջպետական խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 2

Տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտների պահպանման եւ շահագործման համար ֆինանսական ծախսերը, ներառյալ այդ ենթակառուցվածքի սոցիալական ոլորտի ծախսերը, իրականացվում են սույն Համաձայնագրի մասնակից պետությունների մասնաբաժինների եւ Անկախ Պետությունների Համագործակցության Ռազմավարական ուժերի միջոցների, ինչպես նաեւ՝ ֆինանսավորման արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Նշված նպատակների համար ֆինանսավորման ծավալների եւ ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները պատրաստվում են Անկախ Պետությունների Համագործակցության Ռազմավարական ուժերի կողմից եւ սույն Համաձայնագրի համապատասխան մասնակից պետությունների իշխանության տեղական մարմինների հետ սոցիալական ոլորտում համաձայնեցումից հետո ներկայացվում են Տիեզերքի գծով միջպետական խորհրդին:

Տիեզերքի գծով միջպետական խորհուրդը քննարկում է այդ առաջարկությունները, որոշում է մասնաբաժինների չափերը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ հողօգտագործման համար վարձավճարը, եւ տիեզերական

ենթակառուցվածքի օբյեկտների պահպանման եւ օգտագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Անկախ Պետությունների Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 3

Տիեզերական ենթակառուցվածքի արտադրատեխնիկական, ինչպես նաեւ սոցիալական ոլորտի օբյեկտների պահպանումը եւ շահագործումը իրականացնում են Անկախ Պետությունների Համագործակցության Ռազմավարական ուժերը՝ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված միջոցների եւ ֆինանսավորման հաստատված ուղղությունների համաձայն:
Սոցիալական ոլորտի օբյեկտների ֆինանսավորման ծավալների փոփոխությունը, սույն Համաձայնագրին համապատասխան, համաձայնեցվում է մասնակից պետությունների իշխանության տեղական մարմինների հետ:

ՀՈԴՎԱԾ 4

Տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտների եւ շինությունների օգտագործմամբ տիեզերական նշանակության հրթիռների թռիչքների մասին ազդարարումը իրականացնում են Անկախ Պետությունների Համագործակցության Ռազմավարական ուժերը՝ Անկախ Պետությունների Համագործակցության Ռազմավարական ուժերի եւ սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունների միջեւ համաձայնեցված կարգով:

ՀՈԴՎԱԾ 5

Տիեզերական ենթակառուցվածքի օբյեկտների եւ շինությունների նորմալ գործունեության եւ տիեզերական ծրագրերի կատարման խախտումների հետ կապված վնասի փոխհատուցումը կատարվում է մեղավոր կողմից տուժող կողմին՝ Տիեզերքի գծով միջպետական խորհրդի հովանու ներքո, սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից բազմակողմ հիմքով ստեղծվող հատուկ հանձնաժողովի կողմից հաստատված չափով, եւ տիեզերական գործունեության մասով առաջնորդվելով 1972 թվականի մարտի 29-ի՝ Տիեզերական օբյեկտների կողմից պատճառած վնասի համար միջազգային պատասխանատվության մասին Կոնվենցիայի դրույթներով:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները պարտավորվում են համաձայնեցված ծավալով եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող անհրաժեշտ տեղեկություն փոխանցել միմյանց՝ կապված տիեզերական գործունեության բոլոր ուղղությունների հետ եւ չթույլատրել դրա արտահոսքը:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Տաշքենդ քաղաքում 1992 թվականի մայիսի 15-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվներում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մայիսի 15-ից: